ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ОРГАН ПО СТАНДАРТИЗАЦИИ И МЕТРОЛОГИИ»
MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
«NATIONAL BODY FOR STANDARDS AND METROLOGY» CJSC

«04» օգոստոսի 2021թ. ՍՉԱՄ-940

«Վոլտ 1999» ՍՊԸ տնօրեն
պարոն Վահագն Ենգոյանին
ք.Երևան, Ավան, Թումանյան 12/2
Էլ.փոստ՝ volt1999llc@gmail.com

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և «Վոլտ 1999» ՍՊԸ-ի միջև 2021թ. հունիսի 30-ին կնքված թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագրի շրջանակներում «Վոլտ 1999» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություն պայմանագիրը կնքվելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով սահմանված ապրանքը, որը «Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել, խախտվել է նաև վերոնշյալ պայմանագրի 2.1.1 կետով սահմանված մատակարարման ժամկետի խախտման 10 (տաս) օրյա ժամանակահատվածը:

Թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագրի 2.1.7 կետով Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը և 2.1.7.1 կետի բ) ենթակետով Վաճառողի կողմից պայմանագրի էական խախտում է համարվում ապրանքի մատակարարման ժամկետները 10 (տաս) օրից ավելի խախտելը:

Հաշվի առնելով, որ «Վոլտ 1999» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Վոլտ 1999» ՍՊԸ-ի հետ 2021թ. հունիսի 30-ին կնքած թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Վոլտ 1999» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «Վոլտ 1999» ՍՊԸ-ի տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացնի լիազոր մարմնին:

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար Ա.ԲԱԲԱՅԱՆ

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/4
Հեռ. (+374 10) 23-26-00
Էլ. փոստ. info@metrology.am, sarm@sarm.am
www.metrology.am, www.sarm.am

0051, Ереван, пр.Комитаса, 49/4
Тел. (+374 10) 23-26-00
E-mail. info@metrology.am,sarm@sarm.am
www.metrology.am, www.sarm.am

0051.Yerevan, Komitas Ave.,49/4
Tel. (+374 10) 23-26-00
E-mail. info@metrology.am, sarm@sarm.am
www.metrology.am, www.sarm.am